# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 24

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2020 թվականի ապրիլի 20-ի թիվ 5 հերթական նիստի օրակարգը.

1.ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու 2020 թվականի ծրագրային հայտերը հաստատելու մասին,

2.Կորոնավիրուսային հիվանդության չեզոքացման միջոցառումների իրականացման համար գումար հատկացնելու մասին,

3.ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին» N 6 որոշման մեջ լրացում կատարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՏՈՅԱՆ ՌՈՍՏԱՄ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՄԱԼ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 25

## ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրին մասնակցելու հետևյալ հայտերը՝

1.Ալագյազ համայնքի Ճարճակիս, Թյա-Թազա և Կանիաշիր վարչական բնակավայրերի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում,

2.Ալագյազ համայնքի Ջամշլու, Սիփան և Ավշեն վարչական բնակավայրերի գազաֆիկացման ներքին ցանցի կառուցում,

3.Ալագյազ համայնքի Ալագյազ, Ճարճակիս, Միջնատուն, Ռյա-Թազա, Միրաք, Շենկանի, Ջամշլու, Սիփան, Ավշեն և Կանիաշիր վարչական բնակավայրերի փողոցների լուսավորության ցանցի ընդլայնում և հիմնանորոգում,

4.Ալագյազ համայնքի 11 բնակավայրերի համար հանդիսությունների սրահի կառուցում:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՏՈՅԱՆ ՌՈՍՏԱՄ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՄԱԼ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

20 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 26

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N296-Ա որոշման պահանջները և հաշվի առնելով ՀՀ-ում սահմանված արտակարգ դրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Թույլատրել Ալագյազ համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2020թ. բյուջեի «Կառավարչական ապարատ» ծրագրի 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից մինչև 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ հատկացնել Ալագյազի համայնքապետարանի կողմից Ալագյազ համայնքում իրականացվող կորոնավիրուսային հիվանդության չեզոքացման միջոցառումների համար: Հաշվի առնելով նաև Արտակարգ իրավիճակ սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշումը, ինչպես նաև համաճարակի տարածման հետ կապված ավագանու նիստեր գումարելու անհնարինությունը՝ Ալագյազի համայնքապետարանի կողմից Կորոնավիրուսի չեզոքացման համար պաշտպանիչ և ախտահանիչ նյութերի ձեռքբերման համար 2020 թվականի մարտի 24-ին «Դավիթ Մկրտչյան» ԱՁ-ին փոխանցված 94700(իննսուն չորս հազար յոթ հարյուր)ՀՀ դրամ և ախտահանիչ նյութերի ձեռքբերման համար 2020 թվականի ապրիլի 6-ին «Անոլիտ-Արմ» ՍՊԸ-ին փոխանցված 80000(ութսուն հազար)ՀՀ դրամ վճարները ընդունել ի գիտություն:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՏՈՅԱՆ ՌՈՍՏԱՄ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՄԱԼ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Ալագյազ, 093-38-84-14 , alagyaz.aragatsotn@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԱՊՐԻԼԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 27

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ-ում սահմանված արտակարգ դրությունը և հաշվի առնելով Ալագյազ համայնքի ավագանիներ Նվեր Շավեշյանի և Սուրեն Մուրազյանի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Ալագյազ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին» N 6 որոշումը լրացնել 12-րդ կետով՝ երկրում սահմանված արտակարգ դրության հետևանքով առաջացած սոցիալական դժվարությունները հոգալու նպատակով համայնքի 75 և ավել տարիք ունեցող բնակիչներին դրամական օգնության տրամադրում՝ 10000-15000 ՀՀ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԿՈՏՈՅԱՆ ՌՈՍՏԱՄ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՋԱՄԱԼ

ՄԱԽՄՈՒԴՈՎ ՌԵԶՈ

ՄՈՒՐԱԶՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ՇԱՎԵՇՅԱՆ ՆՎԵՐ

ՌԱԶԳՈԵՎ ՅՈՒՐԻ

ՍԱԴԵՅԱՆ ՄԻՐՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ